նոցին, ուր երեւեցաւ Քրիստոս Մարիամու Մագդաղենացւոյ յետ Յարութեան, և երարձ անտի զմի կանթեղն Հայոց և զմին եթող 'ի Նշան, և փոխանակ այնր՝ զոր երարձ՝ ետ կախել զկանթեղն Լատինաց, և ետ նոցա 2 սենեակս անդ 'ի պարտիզին՝ մին փայտաշէն և միւսն քարուկիր, և էառ 'ի նոցանէ զերիս կամարս 'ի Վերնատան, փոխարէն այնոցիկ զորս ետ՝ և բարձեալ զմիջնորմն խառնեաց յեկեղեցին Հայոց, որով ընդարձակեցաւ տեղին, եւ պայման եդին Լատինք յաւուր տօնի Զատկի նոցին դնել 'ի պատուհանս Հայոց ընդ պատուհանաց իւրեանց զոյգ աշտանակս մոմեղինօք, և զկնի Տօնին բառնալ զայնս (1632)։

ԳԼՈՒԽ ԽԲ.

ՎէՀ Յունաց ընդ Լատինս սակս խնդրոյ Ս. Տեղեաց, և գրաւելոյ Յունաց զԳողգոթայ և զայրն Ծննդեան։ ՎէՀ ընդ Հայոց սակս Պատանաւեղջն։ Սարայի վանքն։ Հակառակութիւն Սերվիացւոց և Վրաց։

ՊԱՏՐԻԱՐՔՆ Յունաց Թէոփանէ, որ ղեդերէր 'ի գը-ղրունս մեծամեծաց տէրութեանն 'ի Կոստանդինուպօլիս, յաջողեցաւ առնուլ հրովարտակ յԱրքայէ սակս գրաւելոյ զՍ. Տեղիս յԵրուսաղէմ. առ ընդ իւր և զերկուս արս 'ի դրանէ իբրեւ Մոռպաշէր, ընդ որս էր և Պայրամ անուն ոմն յազգէ Յունաց։ Ի հասանիլ սոցա յԵրուսաղէմ ետուն ընթեռնուլ զհրովարտակն 'ի ժողովին այլազգեաց, եւ էառ 'ի Լատինաց Թէոփանէ զմին յերից բանալեաց այրին Ծնընդեան 'ի Բեթղեհէմ, և կախեաց անդ զկանթեղս. և եդ զերկուս աշտանակս մոմեղինօք 'ի մէջ այրին։ Ապա ըստ մտաց հրովարտակին պահանջէր 'ի Լատինաց զմեծ եկեղեցին Բեթղեհէմի, և զերկոսին պարտէզս արտաքոյ նորին, զՊատանաւեղին, և զոյգ աշտանակս, և զկանթեղս անդ, վերին և ստորին 4 կամարս Գողգոթայի, այսինքն զրոմանդակ Խաչելութեան տեղին, որպէս էր յառաջադոյն 'ի ձեռս Հայոց, զորոյ զմի մասն յետոյ առին Լատինք 'ի Վրաց,